



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ե. — ՇՐՋԱՆ ԺԵ.

1882

ՏԱՐԻ ԺԵ. ՄԱՅԻՍ 31.

ԻՆԴՆԱՃԱՆԱԶՈՒԹԻՒՆ.

Կարելի է, որ դու կարծումես, որ աշխարհքը ճանաչումես, բայց խմայիր, որ քո ճանաչածդ նորա շուարն է, որ քո աչքիդ երևումէ: Ի՞նչ կրննի մերքդ անդադար վաղելուցդ հետևումն քեզ երեւեցած բաղադր հասնելու, որով կարծումես թէ՛ նպատակիդ հասած կլինիս: Ինչիդ է պէտք մինչեւ անդամ ամենայն իմաստութեան լայնը, երբ որ դու ինքդ քեզ չես ճանաչում: Մարդիս սրտի խոր տեղերում ծածկուած իւր ունեւարու վիճակի աղբիւրը խոխաջումէ բոլորովին անտեսանելի կերպով. եթէ հանդարտ ու մարտւր է հոսում ջուրը, քո բոլոր դործերիդ միջից պէտք է անց կենայ ջրելով. բայց եթէ կատաղում, ուռչում է, կեանքիդ հանդստութիւնը կկորցնի բոլորովին: Աչքդ աւելի ներսիդ կողմի վրայ պիտի լինի քան դուրսը, աշխարհի վրայ, սորա համար, ինչ որ ուզումես անել, չսկսած, առաջ սրտիդ հարցութիւն լինէ՛ր: Դատում, քեզ ծուռ բան չի ասիւ. ինչ որ քեզ կասի թէ՛ սղիկ է ու լաւ, աւար սրտով այն բանին կպիր:

Մեր խելքը շատ բաների է համնում, շատ գգուար ու խոր բաներ հասկանում, շատ հանելուկներ հանում, բայց մեզ ամենամօտ բանին մեր խելքը շատ գգուար է համնում. ուղղումիւմ ասել, Բեշ, Բեշ անշը Բանէլու, ճանաչելու Իողմանէ՛ մեր խելքը մեծ գգուարութիւնների է հանդիպում:

Աւրիշ ամեն բաները մեք շատ աւելի որոշ կերպով ենք տեսնում, քննում, ջոկում, քան թէ մեք մեզի: Մեր մեր տես ու ճանաչ մարդի կերպարանքն ու երեսի գծադրութիւնն, հասակն

ու շատ բանը, առանց դժուարութիւն քաշելու, միաներս ենք բերում, ինչպէս որ կայ նա, եթէ մեր աչքի առաջն եւս չլինի ու բաւական ժամանակ անց կացած լինի, որ մեք նորան տեսած չլինինք, ուրիշ տեղ գնացած լինելու պատճառովն. աւելի լաւն ասեմ՝ միտքներումս է մնում մինչեւ անգամ այն ուրիշ տեղացի ու մեր ամենեւին չտեսած մարդն, որին մի անգամ ենք միայն մի տեղ տեսել. բայց մեր իսկ անձը, իսկ մեզի ամենեւին չենք կարող պարզ միտքներս բերել, թէեւ միշտ հայելումն մեք մեզի, մեր երեսն տեսած եւս լինինք։ Մեր երեսայարկը մեր մտքումը լաւ չէ մնում, եւ չենք կարող ինքներս մեզ հաւատալ թէ, իսկ այն կելպին ենք, ինչպէս որ մեզ տեսանք։

Այս՝ մի զարմանալի մի՝ ուրիշ տեսակ՝ բան է՝ ինքն իրեն՝ ու շատ մարդոց զարմանալի պէտք է թուած լինի. Ինչի՞ համար է արդեօք Արարիչն այսպէս տնօրինել։ Այս բանը, ես կարծում եմ, եւ չեմ սխալուում, որ շատ մարդի պատճառ տուած կլինի ինքն իրան հարցանելու թէ, ո՞վ եմ ես։

Մեր էութեան հոգեւոր, բանական, դատող եւ ազատ կամքով գործող մասն, որ մեր մէջն է, այսինքն մեր հոգին, մի/թէ մեր հինգ զգացմունքներն են, որ ճանաչեն, գիտելով, փրահասու լինելով. այդ նոցա հասկանալու եւ անելու բանը չէ։ Մեր մեր հոգի ունենալը հասկանում ենք մեր գիտակցութեամբ, որով ինքներս մեր մէջը իմանում ենք, ու համոզվում, որ մեք հոգի ունինք. որովհետեւ տեսնում ենք, որ մեք մտածել, ցանկանալ, փափագել եւ զգալ ունինք՝ մեր մտածողութիւն, ցանկութիւններ, բաղձանք ու զգացմունք ունենալուց՝ մեք հասկանում ենք, որ մեք հոգի, բանականութիւն ունինք։ Աւելի մարդոց բանական հոգի ունենալն եւս մեք իմանում ենք միայն այնով, որ տեսնում ենք ու հասկանում, որ նոքա եւս մտածել, ցանկանալ, փափագել ու զգալ ունին, որ յայտնի է լինում մեզ նոցա խօսքերից ու գործերից։ Որովհետեւ բոլոր մարդկային հոգիներին Աստուած՝ ամեն հոգիներից ամենաբարձր Հոգին՝ պարգեւել է բանականութիւն. եւ որովհետեւ ամեն մի մարդի բանականութիւնը կամ խելքը մի եւ նոյն օրէնքներն ունի, որով ճանաչում եւ ընդունում է ճշմարիտը, ուղիղն ու բարին, այս օրէնքներովն մեք կարողանում ենք ճանաչել, ու գատել թէ՛ մի բանական հոգի միւսից աւելի կատարեալ է, կամ՝ ոչ, երբ որ

նոյա սրտինը, մտքինը յայտնի է լինում մեզ աւելի լաւ, կամ աւելի վատ խօսքերից ու գործերից:

Առանց կասկածելու, առանց սխալուելու կարելի է ասել, որ ամենայն երկրաւոր իմաստութեան որպէս եւ նորա գերագոյն նպատակի սկիզբն ու հիմն մարդիս ինքն իրան քննելու մէջն է: Այս մտքով հին ժամանակի, մարդոց կւստաշտ եղած ժամանակի ամենալուսաւորուած փիլիսոփայի, Ասկրատէսի տուած ուսումի առաջին եւ գլխաւոր խօսքն այս էր՝ *Ինչքէլ ճանաչէր: Նոյն իսկ մտքով յորդորումէ մեզ սուրբ գիրքը, նոյնպիսի միջոց ու ճանապարհ մեր առաջին գնելով, ճշմարիտ իմաստութեան հասնելու համար, ասելով թէ՛ Ինչեւր յեղ փոքեցե՛ք Լէ՛ւրեւո՛ւ հա՛սարէ՛ Դժն է: Ինչեւր յեղ քննեցէ՛ք:*

Եթէ որ ինքս ինձ լաւ չքննեմ, ու չճանաչեմ, չեմ կարող իմանալ ու ինքս ինձ դատելով հասկանալ թէ՛ ինչ ընդունակութիւններ, ինչ շնորհքներ ունիմ, որ աւելի բարձր բաների վերայ պիտի բանեցնեմ. նոյնպէս եւ չեմ կարող հասկանալ թէ՛ որանկից եւ ինչից են յառաջ գալիս գլխաւորապէս իմ ունեցած պակասութիւններս, որ ինձ չեն թողնում ճշմարտապէս առարկնի լինելու: Ինչպէս պիտի ես մի մարդի սխալանքը իրան հասկացնեմ, եթէ որ առաջ չիմանամ, որ նա այս ու այն պակասութիւններն, որ ունի, իրանիցն է, ուրիշից չտեսնի, որովհետեւ ինքն է այդ իւր պակասութիւնների տէրն. կամ թէ ինչպէս պիտի ես իմ իսկ բանականութիւնս, հոգիս, սիրտս ազնուացնել կարողանամ, քանի որ յայտնի չեն ինձ նոյա ունեցած պակասութիւններն:

Շատ քիչ են այն մարդիկը, որ իրանք իրանց այնպէս լաւ, այնպէս մօտիկ ճանաչելն, ինչպէս որ պէտք է, իրանք իրանց լաւ չճանաչելուցն է որ, իւրեանց իսկական պակասութիւններն շատ անգամ ներելի են համարում եւ իւրեանց լաւ յատկութիւններն (կողմերն) երբեմն շատ մեծ բանի տեղ են դնում, երբեմն եւս, այնքան բանի տեղ չեն դնում: Արանիցն է որ, դժուար է պատահում, որ իրանք իրանց հետ միշտ համաձայն լինին. իրանք՝ իրանց ասածներին հակառակն են խօսում՝ իրանք՝ իրանց արածներին ընդդէմն են անում, իրանց ո՛չ խօսքերն են իրար բռնում, ո՛չ գործերն: Յայտնի տեսնվումէ, որ հաստատ խելքի, մտքի, համոզմունքի տէր չեն ու հանգամա-

նոց հոտանքը քշում, տանումէ հետն նոցա, ընդդիմանալու, հաստատ, անփոփոխ մնալու պէժ չունին:

Միայն նա, ով որ իւր վրայ՝ առանց այլեւայլի կատարելու՝ մի մեծ պարտականութիւն է գնում, որ ինքն իրան վրայ ամենասաստիկ կերպով՝ իւր սրտի ամենայն շարժմունքներէ, յուզմունքներէ մէջ՝ չորս աչքով նայի եւ ոչ մի փոքրիկ բան աչքիցն չփախցնի եւ երբ որ այդ անումէ երկար ժամանակ, այն մարդն է վերջապէս իմանում իսկապէս թէ՛ ինչ է իւր արժէքը, մեծ է արգեօք իւր գինը, կամ քանի՞ փող է արժու: Ով որ այնքան թեթեւամիտ է, որ իւր անձնասիրութեան տուն տալովը պիտի իրան գին գնի, նա ի՞նչ պէտք է իմանայ թէ՛ ինչքան է արժու ինքը: Սորանիցն է որ, եւ ի՞նչ դարմանալու բան է, որ կան մարդիկ, որոնց այնպէս է թլոււմ, որ աշխարհքն կոյր է, իրանց չէ ճանաչում. բայց՝ շատ կարելի է, որ աշխարհքը նորանց՝ ձուռի պէս իւր ատամներին խփել է՝ եւ շատ աւելի լաւ է ճանաչում, քան թէ իրանք իրանց:

Կան մարդիկ, որ իրանց վրայ կարծումն թէ՛ իրանք ոչ ոքի հետ թշնամութիւն անող, քէն պահող չեն, կռիւ սիրող չեն, այլ ամեն մարդի հետ կառավարուող բնութիւն ունին, որովհետեւ իրանք են առաջինը, որ ձեռք են երկարացնում ու հաշտութիւն առաջարկում. բայց այդ տեսակ մարդիկը միայն կեղծաւորութիւն ու խաբերայութիւն են անում շատ անգամ, իւրեանց ահլիցը ցածութիւն անելով: Կան մարդիկ, որ իրանց սուրբ, կոյտ, բարոյական են համարում, որովհետեւ ուրիշի արած յանցանքներն իրանք եւս չեն արել. բայց շատ կարելի է, որ չստատահեց ու չյաջողեց, կամ իւրեանց անելու գործի հետեւանքից վախեցան, եւ այդ երկիւղը նորանց անաւակութիւնից յեա քաշեց ու պահեց: Կայ այնպիսի մարդ, որ իրան՝ նեղութիւնի համող եւ իւր ձեռքից եկած լաւութիւնը ամենին անելու պատրաստ ոք մին է համարում, որովհետեւ մի այնպիսի բարի բանի մէջ օգնութիւն է հասցրած լինում, որ քաղաքի, կամ երկրի բարեպէս համար է անվում թէ շինվում. բայց ինքն իրան չի տեսնում եւ չէ ուզում համոզուիլ իւր մէջն, որ իւր բարի գործի միւս երեսը, այսինքն միաքը՝ իրան լաւ ասել տալու, պատիւ ստանալու համար էր, ինչպէս որ իւր ամենայն արած գործերն իրան պատիւ բերելու մտքով է եղել. եւ այդ իւր

պատուասիրութիւնն է եղել, որ իրան տարել է այս, այն բարի գործն անելու: չէ ուզում ասել ինքն իրան թէ, շատ զգուար կանէր մի բարի գործ, եթէ որ իմանար, որ բոլոր աշխարհքին յայտնուելու չէ, որ իրան արածն է, ոչ թէ ուրիշի:

Այս ինքնախաբուծիւններն մարդիս ինքն իրան ստատիկ քիչ ճանաչելույն է—եւ ո՞վ է սիրտ անողը՝ իրան իմաստունի, փիլիսոփայի անունը տալու, ով որ ինքն իրան միշտ խաբումէ միայն:

Ի՞նչ գէշ «-ը» է, ի՞նչ կարծէճ է «-ճարդային ընկեր-Պէտան Բը» Այս խօսքին, որքան եւս մեր սրտին մօտիկ բան լինի, որքան եւս մեր անձնասիրութեանն հաճելի լինի, չենք կարող պատասխան տալ՝ առանց երկար միջոց եւ մեր սրտի խոր տեղերը թափանցող հայեացքով նայելու եւ նկատելու այն ամեն բանը, ինչ որ քոյրարար ամենայն որ մեր սրտի մէջ լինումէ:

Միայն այն ժամանակ, որ մեր սրտի ամենածածուկ ծայրերը կկարողանանք բանալ ու տնդողել, այն ժամանակ միայն, որ մեք անսխալ կերպով կարող կլինինք քննել այն պատճառներն, որ առիթ տուին մեզ այս, այն գիպուածի մէջ այսպէս ու ոչ այնպէս անել, այն ժամանակ միայն, որ մեր զգացումները փոփոխուելու վրայ լրտեսների նման չորս ուղիով կնայենք, այն մեր փոխուող զգացմունքների վրայ, որ մեր մտքումը դնել կուտան ու կզրգեն մեզ այս կամ այն բանն անելու—, այն ժամանակ միայն, ասում եմ, հաստատ եւ անխափած կերպով կճանաչենք մեք մեր չափը, նոյնպէս եւս մեզ նման մարդոց էութիւնը:

Ով որ ինքն իրան մանրամասնաբար քննած չէ, չհամարձակուի եւս ուրիշների խօսքերի ու գործերի վրայ գատողութիւն տալ: Այնպիսի մարդն միայն հարեւանցի եւ վեր ի վերայ պիտի գառի մի մարդի, երեւոյթի վերայ նայելով: Երբ որ ինքն իրան դեռ եւս պարզ ճանաչած չէ, ի՞նչպէս է կարող ուրիշի սրտի շարժող պատճառներն հանելուկի պէս գտնել: Բայց ով որ իւր թուլութիւններն, պակասութիւններն ճանաչումէ, սիրտը ցաւելով իւր իսկ արած սխալանքների վերայ, փոշիմանկելով ու աւաչելով ինքն իրանից, նա իւր նման մարդի պակասութիւնների վերայ շատ թեթեւ կերպով ու ներողամտութիւնով է խօսում, որպէս եւ նորա մի փառաւոր գործը, որ հասարակ մարդոց բազմութիւնն մինչեւ երկինքն է բարձրացնում, շատ զգուշութեամբ է գովում: Նա շատ լաւ գիտէ թէ, որչափ քիչ բան է

մեր արածն այն բաների մէջն, որ աշխարհքը բարձրացնումէ ու երկինքն հանում. եւ թէ որքան ներողամտութեան է արժանի մի յանցանքի մէջ ընկած մարդ, որոյ արիւնը գլխին խփելուցն ու ինքն իրան կորցնելուց, այնպիսի մի մեղքի մէջ ընկաւ, որ իւր բոլոր կեանքի մէջ մոռանալ չէ կարող, որովհետեւ այդ կրակը մինչեւ իւր մահը իւր սիրտը պիտի այրի ու երբէք պիտի չհանգչի:

Միայն ինչեւս մէկ մէկ անցը ճանաչելով է, որ կարողանո՞ւնք անախճալ կերպով մէկ նման մարդոց եւ ճանաչել: Այո՛ մեր անձը, մեզի ճանաչելը, ինչպէս սատճներիցս երեւումէ, այնպիսի մի մեծ նշանակութիւն ունի մեր բոլոր կեանքի համար, մինչեւ անգամ մեր յաւիտեանական կեանքի համար, որ ամեն մի քրիստոնէի առաջին եւ գլխաւոր գործը պիտի լինի, որը կատարելու համար ամենայն ջանք ու աշխատութիւն պիտի ձեռքից չթողնի, որ իւր անմահ հոգին արդէն այս աշխարհումս իւր բարձր կատարելութեանն հասցնի: Բայց ի՞նչպէս պիտի կատարելութեան տանի իւր հոգին, քանի որ չգիտէ թէ՛ որ տեղից պէտքէ սկսի, ի՞նչպէս է ուզում՝ նա յաւիտեանական թագաւորութեան մէջ՝ միւս աշխարհում՝ հոգիների կատարելութեան բարձր աստիճանին հասնի, երբ որ սիրտ ու կամք անգամ չունէր, որ այս կեանքումս այնչափ բարի, մաքուր ու մեծ լինէր, որչափ որ կարող էր լինել:

Բայց ամեն մի սկիզբն դժուարին է, որպէս եւ իւր անձը քննելն: Շատ անգամ մեր շուտով ուժից ընկած լինելն է, որ պիտի մեզ տանջի. շատ անգամ ուրիշ ժամանակի պիտի թողնենք այդ բանն, որ մեր խղճմտանքի մի վերքին չկապենք, որ դեռ եւս սաստիկ ցաւումէ: Շատ անգամ եւս ուզումենք յետ ձգել այդ բանն այն պատճառով որ, մի անարգ կիրք մեր մէջը դեռ եւս իրան յագուրդ տալ է ցանկանում, որ անկատար չը մնայ ու հանգստանայ: Բայց ամեն ժամանակ մեր անձնատիրութիւնը ուղղումէ մեր հոգւոյ, մեր բանականութեան աչքը իւր համար կուրացնել եւ մեր թուլութիւններն ու պակասութիւնները ծածկել, որ մեր պարտաւելի մերկութիւնն, մեր ամօթալի պակասութիւններն մեք չտեսնենք, մեր աչքին չերեւի, մեր համար քողարկուած մնայ: Ինքն իրան ճանաչելու համար նախ եւ յառաջ պէտք է մի պատերազմ՝ անել մեզ՝ ինքներս մեր մէջը:

մեր անձի հետ՝ ինքներս մեր գէժ առաջ պէտք է հրամայենք մեր պատուասիրութեանն ու հպարտութեան, մեր ընչասիրութեանն ու անառակութեան հակմանն, մեր առելութեանն, նախանձունն ու բարկութեանն, որ իրանց ձայներն կտրեն ու պառանձուին, որ անլրդով բանականութեան հանդարտ ձայնը լսուի:

Առանց մեր անելու շնորհն որ է գործ, որով որս էլ նման մարդին լաւ—նիւն, կամ վատ—նիւն էս անում, որսին—նիւն կամ ցատ—նիւն էս պարսնում, մեր արաւ լի է ինչպէս համարայր բանն արիւր լաւ քննիր, պառլիր, քրքրիր արածիդ ծածուկ պառնառնիքն, որչափ եւս քո սուր աչքիդ ու մտքիդ չընկնել ու խոր տեղ ծածկուիլ ու թագ կենալ ուղենան: Միտք արած թէ՛ անելու գործդ, կարելի է, ծանր կերպով ու լաւ մտածելով ու կշռելով չարիր կարելի է, այնպիսի հանգամանքներ յանկարծ պատահեցան, որ ինքդ եւս չիմացար, թէ ինչ արիր կամ միտք անելու ժամանակ, կարելի է ասել թէ, չունէիր այնչափ կարճ միջոցում արիր ինչ որ արիր—այն ժամանակն եւս ինքդ քեզ առանց քննելու պէտքէ չթողնես, պէտք է իմանաս թէ՛ ինչից յառաջ եկան այն զգացմունքներդ՝ որ քեզ շարժեցին, գրկեցին արած գործդ անելու: Արդեօք լսու արիր, որ թոյլ տուիր քո զգացմունքներիդ քեզ վերայ իշխելու: — Ինչիցն է, որ դու մի մի ժամանակ այնպէս տխուր ես ու ինքդ քեզանից դժգոհ, որ դու այստեղ, կամ այնտեղ այս ինչ բանը բերանիցդ հանեցիր, կամ խօսեցիր: Քո շտապելուդ ու այդ բանն անելուդ իսկ պատճառն ինչն էր: Արդեօք քո սնապարծութիւնն (պարծանք սիրելը) ու թեթեւութիւնդ էր, որ մէջդ կայ, որ քանի եւս չես ուզում ցոյց տալ, բայց դարձեալ չես կարում ծածկել ու մարդոց չիմացնել, ու որ երբեմն՝ ընդդէմ ցանկութեանդ ու կամքիդ՝ յանկարծ դուրս է պրծնում ներսիցդ ու կարծես, նորա համար, որ քեզ խայտառակի, քեզ, որ քեզ թեթեւութեան ու սնապարծութեան թշնամի ես ուղեցել միշտ ցոյց տալ: Կարելի է, որ քո վիրաւորուած ամբարտաւանութիւնդ է, որն թէպէտ դու ուզում ես ուրանալ ու ցոյց չտալ, բայց նա ինչ եւս անես, դարձեալ քեզ հնազանդեցնումէ իրան ու իւր հպատակն ու խոնարհ ծառան անում: Կարելի է, որ քեզ հանգստութիւն չտուող ընչասիրութիւնդ է, որ քեզ գերի է անում ու քո միւս բոլի յատկու-

թիւններիդ (կողմերիդ) եւս յաղթումէ եւ իւր բռնակալ կամ-
քին յետին ծառայ անում:

Եթէ որ, առանց քեզ վերայ թոյլ կերպով մտիկ տալու, լաւ
քննել ուղենաս ինքնդ քեզ, քո բոլոր մաքերդ ու բոլոր սրբ-
տինդ, ոչ միայն քեզանից ոչինչ ծածկուած չմնալ, այլ եւ միշտ
պարզ կիմանաս, որ տեղից որ պարբերից յառաջ եկան քո մնա-
քերդ ու ցանկութիւններդ, երբ որ ամենն բաց արիր ու քեզ
յայտնի եղաւ, քեզանից ծածկուած բան ամենեւին չմնաց, ու
տեսնումես, որ կեղտոտ, ծաւռ ու անպիտան բաներ էին սրտիդ
ու մտքիդ միջինը ու դու քո պատիւդ պահելու համար, անպա-
տիւ մարդ չճանաչուելու եւ չլինելու համար՝ ոչ մի մարդի ա-
սել չես կարող, ապա ինչո՞ւ՝ այդ ամենը լաւ հասկանալուցդ
յետոյ՝ ինքդ քեզանից չամաչես, որ այդ անարժան ու քեզ ա-
մօթ բերող գրութեան առաւելանին ես ինքնդ քեզ բերել, հա-
ցրել, եւ ինչո՞ւ չպիտի հանես, կորցնես մտքիցդ ու սրտիցդ այդ
ցած դժբաղմունքներդ ու մաաժմունքներդ: Ի՞նչիդ պէտք է այն
պատիւը, կամ ի՞նչ պատիւ է քեզ համար այն պատիւը, որ դու
ինքնդ քո միջումդ ասում: Խոստովանումես թէ՛, դու այն քեզ
տուած պատուին արժանի չես: Ապա ի՞նչի համար քեզ աւելի
ցանկալի է ու ջանք ես անում, որ քո հոգուդ մի վերքը ծած-
կես, ուրիշների աչքին չընկնի, աւելի լաւ չէ՞, որ այդ վերքը
բժշկես: Դու ինքնդ ասա՛ երբ որ ուրիշները քեզ պատվումեն,
այդ քեզ տուած պատիւովը արդեօք դու քեզ աւելի՞ արժանա-
ւոր ու պակասութիւն չունեցող մարդ կարո՞ւմ ես արդեօք հա-
մարել, գիտեմ, որ՝ չէ՛: այլ երբ որ այդ ցած գրութեանդ մէջ
քեզ պատվումեն, դու քո սրտումդ ուրախանալու եւ քո աչ-
քումդ բարձրանալու տեղն, ինքնդ քո աչքիցդ ընկնումե՞ս:

Ամենօրեայ կեանքի տեսակ տեսակ զբաղմունքի մէջ, իրաւ է,
շատ անգամ միջոց ու սիրտ չենք ունենում, որ մեզ, մեր անձի
վրայ մտածելու սկսենք: Օրն անց է կենում, գնում այս ու այն
գործով, արհեստով, առուտութեամբ, սորա նորա հետ տեսնուե-
լով, խօսելով, այստեղ, այնտեղ հանդիպելով: Մեր այդ գործերի
մինն եւս այն լինի, որ կատարենք այն, ինչ որ մեր հանդարտ
ժամանակին մտածումենք ու միտքներումս սարքում, դնում,
որ անենք:

Իսկ ժամանակն այն է, երբ որ օրվայ մեր գործերից պրծնու-
մենք. այս միջոցին, երբոր երեկոյեան, կամ գիշերը մեք միայ-
նակ ենք լինում ու աշխարհիս ամեն զբաղմունքներից ազատ
ու հեռացած եւ, այսպէս ասեմ, ինքներս մեզ գարձեալ յետ
գրուած այլ եւս ոչ ոքի եւ ոչ մի բանի չենք պատկանում, այլ
մեզ միայն. երբ միժանը մեզ ամեն մեր կողմը ամենեւին ձայն
ձուն չէ լսում, մինչեւ հեռու անդերումն եւս լռութիւն է
թագաւորում, ու մեք մեզ հետ ու Աստուծոյ հետ ենք մնում
— Աստուծոյ հետն, որ միժանը մեզ մեր վրայ հսկումէ, սրոյ
ձեռքումն է մեր կեանքն, առողջութիւնն ու գոյութիւնն, այ-
ն ժամանակն է իսկ մեր վրայ լաւ մտածելու միջոցն: Բնութիւնը,
(բնական գրութիւնը մարդուս) կարծես, բռնի ուղղութէ կրկին
մեր մէջը գալ, մոնել, եւ նոր անցկացած օրվայ պատահմունք-
ներն, անցքերն ու իրողութիւններն մեր առաջից ազատ իրանք
իրանց անց են կենում, որ մեզ աւիթ տան միտք անելու եւ
ամենայն բանը կշռելու:

Այն ժամանակը քննիր դու ինքնդ քեզ, ինչպէս որ Աստուծոյ
խօսքը քեզ հրամայումէ, եւ տես թէ՛ հաւատիդ մէջն արդեօք
հաստատո ես մնացել. արդեօք դու միշտ այնպէ՞ս ազնիւ, կիրքե-
րից ազատ, սուրիշներին օգնելու, կամ մի լաւութիւն անելու
պատրաստ, ուրիշի մտքինը դեռ եւս ինքն չասած, ուրախու-
թիւնով ու սիրով կատարելու յօժար ես եղած. արդեօք այդ ու
այնպիսի՞ զգացումներ, մտածմունք եւ գործք ես ունեցել, ինչ-
պէս որ քո փրկիչդ ու Աստուծոյդ—է քեզ հրամայել, Յետոյ քեզ
այս հարցումն առաջարկիր. թէ, ո՞ր գործն ես այսօր արել, որ
Ամենագէտ Աստուծոյ դատաւորական աթոռի առաջին քո բարի
կամքիդ վկայն լինէր: Ա՞ր սխալմունքներն էին այսօր քո մէջդ,
որոց իշխանութեան տակն ընկար. ի՞նչ միջոցներ կարող ես
կամ պիտի բանեցնես, որ քո սխալմունքներից ազատ մնաս
եւ նոցա հակառակ առաքինութիւնները քո մէջդ թագա-
ւորեցնես:

Այսօր ձախ ստիգ վրայ էիր վեր կացել տեղիցդ, սիրտդ նեղ
էր, մարդ էիր պտրում, որ հետը կռիւ տաս, աւելի պակաս ա-
սես, կամ մի կծու, մի վատ խօսքով սիրտ ծակես. այդ սրտնեղ
սրամագրութեանդ մէջ քո ընտանեաց միւսին կամ միւսին, կամ
քո ծանօթներից միւսին, կարելի է, աւելի ձանր խօսքեր ասայիր:

քան թէ արժանի էր: Մտքումդ կարելի է, միանգամ գոնե՝ ծանր ու թեթեւ չարիր, որ քո սիրտդ ցաւեցնելու մտքով չէր, որ՝ քո կարծիքովդ՝ քեզ համար գոհաւար կուլ տալու խօսք ասացին քեզ, այլ երկար չմտածելով, կամ չկարծելով թէ՛ իրանց ասած խօսքը մեր կերթայ, կամ սրտիդ կկաշի, մի բան էր, իրանց բերանից թռցրին: Եթէ որ մտածէիր թէ՛ մի ուրիշ միտք, մի քնի հաշիւ չունէին, ահա ներսը քեզ հետ, որ ուղեկով քո սրտիդ կկաշելու խօսք ասեն, ամենեւին չէիր տաքանալ ու քո բերնիցդ աւելի վատ խօսքեր չէիր դուրս ածիլ, այլ կասէիր թէ՛ ինչ նեղանամ, լաւ հասկանումեմ, որ իւր խօսքը բերանումն չեմ ան, դուրս հանեց, յիմարութիւնն էր տրածը, ուրեմն եւ ներքի է նորան: Աւրեմն լաւ զգում ու հասկանումես, որ դու աւելի վատ արիր ու դու ինքնդ շատ աւելի մեղաւար ես քո վարմունքովդ, որ չարից անց կացար, համը փախցրեցիր:

Ինչու է, կամացուկ ասումէ հեշտ ներսդ անձնասիրութիւնդ, բայց բոլորովին ներքի էր, որովհետեւ այսօրվան բարկութիւնդ նորանիցն էր, որ շատ նեղ, տխուր, գոգոհ էր սիրտդ, չգիտեմ ինչիցն էր, բայց այդպիսի վատ տրամադրութեան մէջ էիր: Մտքդ, սիրտը նեղ եղած ժամանակն, իւր ասած, չասածն չէ իմանում ու բերանիցն դուրս եկածն ականջն չէ մոռնում, որովհետեւ իւր սրտի գրութիւնն շատ վատ է, ինքն եւս չէ իմանում թէ՛ ինչ անի:

Աւրեմն դու գիտէիր արդէն, որ մի վատ տրամադրութիւն տիրումէր վրադ. երբ որ դու զգումէիր այդ, ինչո՞ւ քո սանձդ չբաշեցիր, այլ քեզ բոլորովին, թող տուիր, որ մաղձդ թափես մի անմեղի վրայ: Դու լաւ գիտէիր, որ ինքնդ եւս քեզ ճանաչել չէիր կարում եւ չէիր իմանում թէ՛ ինչ է եղել քեզ, որ սիրտդ այդպէս դառնացած է, ինչի՞ համար խկոյն հաստատ մտքումդ չգրիր, որ քո այդպիսի վատ գրութեան մէջ, քեզ այդ միջոցին պատահող, խօսեցնող մարդին, բերանդ ոչ բարով պիտի բացանես ու ինչ հասնի պէտք է ասես, ինչի՞ ասումեմ մտքումդ չգրիր, որ ոչ սքի մի թթու, կծու խօսք չասես, լուռ կենաս, ու, եթէ քեզ բարկացնելու խօսք եւս ասելու լինին, բերան չբացանես ամենեւին: Դու, որ լաւ գիտես, որ մարդդ, իւր բարկացած միջոցին, ամենայն բան տարին ծուռ է երեւում, լաւ խօսքն անգամ վատ է թվում, կարծես ամէն բան նորա համար ծռուել

է, բայց իսկն այն է, որ ինքն է փոխուել, ծռուել. դու, որ այդ ամենը գիտես, ինչո՞ւ քեզ չբռնեցիր ու թող տուիր:

Բայց, կարելի է, որ դու՝ ոչ միայն այսօր, այլ եւ շատ ու շատ անգամ ինքնդ քեզանից դուրս ես գալիս. շատ անգամ է պատահում, որ բարկութեանդ չափ ու սահման չես գնում: Անձնասիրութիւնն ծածուկ ասումէ թէ՝ իւր բնութիւն այսպէս է, իւր բնութեանը պակասութիւնն է. այս մարդս՝ ինչպէս ծնուել է, այնպէս եւս կմեռնի, բնութիւնը փոխելը շատ դժուար բան է. օձն իւր կաշին կփոխի, մարդս՝ իւր բնութիւնն չփոխիլ: Բայց գիտե՞ն իսկապէս, որ բնութեանդ պակասութիւնն է, թէ՞ հենց այնպէս ասումես: Եթէ որ քո ասածդ եւս լինէր, մի՞թէ չէ կարող մարդս իւր հոգու զօրութիւնովն իւր բնութեանը յաղթել: Արդեօք փորձած ունի՞ս այդ ասածս, փորձիր, տես, կլինի՞, թէ չլինիր, քեզ է անկարելի երեւում. բայց մարդիս հոգու զօրութիւնը, քաջութիւնը անկարելի բաները կարելի է անում, երբ որ Աստուծոյ զօրութիւնն իրան օգնելու յոյսն ունի՝ նորան ապաւինելով: Ապա ի՞նչպէս է լինում, որ դու կարողանումես քեզ բռնել, երբ որ քեզանից մեծերի առաջն ես, ապա նորանց առաջն ի՞նչպէս է լինում, որ կատաղում ես սրտումդ, բայց ձայն չես հանում, կամ, երբ որ այնպիսի մի տեղ ես գտնվում, ուր որ շատ մարդ քո վերայ է մտիկ տալի եւ որոնց որ դու պատվումես ու նորանցից քաշվումես: Աչքդ լաւ բաց արա՛ ու իմացիր, որ այդ քո ձայն չհանելուդ եւ քաշուելուդ ժամերն քո խարդախութիւնդ ու ստախօսութիւնդ պախարակողներն ե՛ն: Ինչ որ դու այստեղ ունայն տեղ կարող ես անել, ինչո՞ւ չես կարող միշտ անել: Եթէ որ մի անակնկալ ստիպումնք, որ դրսից քեզ վերայ զգումես, քեզ քո սանձդ քաշել է տալի, եւ այնպէս փոխվումես, որ կարծես թէ՝ այն կատաղող մարդը չես, որ ինքնդ քեզ բռնել ամենեւին չէիր կարողանում, ապա ինչո՞ւ չես աշխատում քո հանգարտ եղած միջոցումդ քո տանդ, քո ընտանեացդ մէջ ինքնդ քեզ սանձել եւ տանդ մէջ քեզ քո տան իսկական տէրն ու մեծը ցոյց տալ քո արժանաւոր վարմունքովդ, քո խելքովդ ու սրտովդ, որ քեզ պատիւ բերի, քեզ պատուել ու սիրել տայ քո տանդ մէջ՝ մեծից մինչեւ փոքրը:

Քո մէկ պակասութիւնդ եւս քեզ ասեմ, որ քեզ լաւ ճանաչես. Դու ուրիշների առաջն միշտ աշխատումես պատուելի ու

լաւ բնութեան աէր մարդ երեւելու, ցանկանումես մանաւանդ ամենայն կերպով, որ քեզ բարոյական մարդ ճանաչեն. բայց ծածուկ՝ մի մի ժամանակ՝ թողես տալի քո սանձդ. ինչ վատ զգացմունքներ, ինչ անպիտան երեւակայութիւններ, առեւ, ազատ գալիս են քո մտքիդ, քո սրտիդ մէջը մտնում: Այդ զգացմունքներդ ու երեւակայութիւններդ քո մէջդ մեծանալով, զօրանալով, ինքդ եւս չես իմանում, թէ ինչպէս քո մէջդ մի ամօթալի կիրք են մեծացնում: Ամեն մեղքից աւելի վատն այս է, որովհետեւ այսպէսով է մարդս մեղքի գերի դառնում: Վատ ընկերութիւններն, իրաւ է, մեր բարի վարքը փչացնումեն. բայց ամենից վատ ընկերութիւնն՝ մեր անբարոյական եւ անմաքուր մտքերի հետ ընկերութիւն անելն է: Մի անիծելու գործ ածելու համար, միայն մի գիպուած է հարկաւոր. Բայց երբ այդ նգովելի գիպուածն պատահումէ եւ երբ որ դու՝ ինքնդ քեզ այլ եւս բռնել չկարողանալով, կորցնումես քեզ. այնպիսի մի բան ես անում, որ սիրտդ միշտ պիտի այրի, քանի որ միտքդ ընկնի—ինչպէս կոտորուած, ինչպէս ցածացած ես քեզ տեսնում՝ այն ժամանակը: Ինչպէս սրտանց խօսք ես տալի ինքնդ քեզ, հազար ու մէկ երգումով, այլ եւս այդպիսի բան չանելու: Բայց, կարելի է, որ, եթէ գարձեալ մի այդպիսի գիպուած պատահի, գարձեալ քեզ սանձել չկարողանալ ձեւացնես ու քեզ թոյլ տաս, չեմ կարում գիմանալ ասելով, գարձեալ քո մարդկային բարձր արժանաւորութեանդ ընդդէմ բան անես ու գարձեալ փոշիմանես եւ ամօթիցդ գետինը մոնել ուղենաս — Այս քո խեղճութիւնդ նորանիցն է, որ դու քո փոքր ժամանակուանիցդ վատ բանի կայծը քո մէջ չես հանգցրել, չես խեղդել, այլ թոյլ ես տուել, որ մնայ. քանի գնացել է, աւելի լաւ կպել է այդ կայծը, կամաց կամաց մեծացել է, ու վառուելով, կրակ է գարձել, որ քեզ ու քո հոգու տունը այրումէ, փչացնում: Եթէ որ ժամանակին աչքդ լաւ բաց անէիր, մօրիկ տայիր, թէ ի՞նչ վնասներ կարող է քեզ բերել այն կայծը, քո հոգուդ հանգստութեան թշնամուն ճանաչած կլինէիր եւ սկիզբից դէմ կկենայիր քաջ սրտով ու յապիտած կլինէիր:

Բայց որչափ եւս որ հառտաւ մտքներումս գնումենք, որ մեղքը, այնպէս անենք, որ մեզ վերայ ազդեցութիւն բնաւ չունենայ. բայց եւ այնպէս, սակաւ է պատահում, որ մեք մեր վե-

բայ դատաւոր լինինք անաչառ կերպով եւ առանց նախադաշարուած լինելու: Մեզ, մեր անձը, մեր ետք թննելու ժամանակ, ամեն անգամ շատ բան մեր սրտի բոլեական արամադրութիւնիցն է կախուած, այն վայրկենին ինչ որ մեր խելքն առում է մեզ համար, այնպիսի վճիռ եւս տալիս ենք: Ինչ որ մեք մեր ուրախ ժամանակին, տաք տաք անում ենք, շատ անգամ փոքր բանի տեղ դնելով մեր արածն, յետոյ, մեր տխուր եղած միջոցումն, շատ աւելի մեղադրելի եւ անհրելի է երեւում մեզ: Սորա համար շատ եւ շատ օգտակար է մեզ, ինքներս մեզ լաւ ճանաչելու համար՝ մեր արգար, ճշմարտութիւնն քարեկամներէ խօսքին եւս ականջ անել, նոցա մեզ տաճր, նոցա մեզ տուած խորհուրդը լսել ամենայն սւշադրութեամբ եւ թէ ինչպէս են նորա մօտիկ տալի մեզ վերայ, ինչպէս են տեսնում մեր վարած կեանքն, ինչ խելքի ու մտքի տէր են մեզ ճանաչում ու համարում: Եթէ որ նոցա տաճը ճշմօրիտ է, մեր խղճմտանքը խելոյն մեզ կտալ թէ մեք ծառ ենք ու մեղաւոր, եւ մեր անձնասիրութիւնն իւր ձայնը կկտրի: Մինչեւ անգամ մեր մեծ թըշնամիներն կարող են մեզ շատ օգտակար լինել մեր թուլութիւններն ու պակասութիւններն լաւ ճանաչելու համար: Ինչու որ, ով որ մեզ բարի չէ կամենում, մեր փոքրիկ պակասութեան վերայ անգամ չորս աչքով է նայում, տեսնում ու խօսում: մեր ամենալաւ բարեկամն այդ չէր անիլ, կինսպէր, կմեղկանար ներողամիտ կլինէր դէպ ի մեզ, յարգելով մեր ունեցած ուրիշ արժանաւորութիւններն՝ ու մեք մեզ լաւ չէինք ճանաչել:

Ինքնաճանաչութիւնը իմ ամեն օրուայ գործս ու պարտքս լինի. պատճառ որ ինքնաճանաչութիւնս իմ հայելիս է, որոյ մէջ ես ինձ, իմ հոգիս, իմ սիրտս, իմ բնութիւնս պարզ ու լաւ տեսնում եմ: Ինքնաճանաչութիւնը իմ հոգուս, իմ բանականութեանս լապտերն է իմ կեանքիս խաւար տեղերում: Աւելի անաչառ կերպով պիտի ես ինձ այսուհետեւ դատեմ, որ աւելի եւս ապահով լինիմ իմ գերագոյն Վատաւորիս շնորհացն ու ողորմութեանն, որով ուրախ լինիմ: Դու, իմ Աստուածս, իմ սուրբ վարքով ապրելուս միջոցներն իմ կենաց, ճանապարհի վրան ես գրել, որ պէտքէ գնամ, ինչպէս կարող եմ քո առաջին արգարանալ, երբ որ այդ միջոցներն ոտնակոխ անեմ, անցնեմ, երթամ, արհամարհեմ ու գործ չդնեմ:

Այլ իմ երկնաւոր Հայր, հասնես ինձ իսկոյն ու միշտ զօրութիւն, կարողութիւն տաս, երբ որ ես, քո պատուիրաններէդ համեմատ, իմ սրտիս արժէքն եմ ուզում քննել, իմանալ, Ամեն երեկոյին մտածելս քո կամքիդ եւ քո ամենագիտութեանդ վերայ՝ ամեն երեկոյ ինձ քո գաղափարներիդ առաջն քաշի բերի, քեզ հաշիւ, համար տալու համար, այն անաղարտ հասկացման, ուր որ հաշիւ ու համար պիտի տամ ամենուրէք եղող Ստեղծողիդ մօտն ու աչքի առաջին, ուր որ խաբէութիւնն ու ստախոսութիւնը բան չանիլ:

Այլ որ այսպէս սովորեցրել է իրան՝ իւր անձի հետ հաշիւ տեսնելու, այն մարդն ո՛վ Հայր, իւր կեանքի վերջին րոպէումն, որ արդէն երթալու վերայ է իւր բոլոր կեանքի մասին հաշիւ տալու, անմեղ երեխայի վստահութիւնով Քո ողորմութեանդ վերայ յոյս կունենայ ուրախ սրտով. իսկ զղջացած մեղաւորին միտիթարութիւն է այն երկնային շնորհաց խօսքն թէ՛. « եթէ որ ձեր մեղքերը արիւնի պէս եւս կարմիր լինին, ձիւնի պէս սպիտակ կանեմ »:

(Թարգ.)

Գ. Ե. Ա.

ԻՄ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

(Շարուն. Է ԶԵՔ ԱՐԴԻՄ, ԴԵՆ Բ. Դ.)

Քաղաքները լծիր են, իսկ զիւղացիք վտակների աղբիւրներ, ով կամենումէ համոզուել՝ թող մի բարձրավանտակի վերայից մտիկ անի իւր չորս կողմը, և կրտսնի թէ զիւղացիք ինչպէս լցվումեն քաղաք իւրեանց զանազան արտադրութեամբ: Վտակներով լցվումեն լծիւրը, իսկ լծիւրը գոլորշիներ են արձակում, որոնցից կազմուած անձրեւը և ձիւնը տեղալով երկրի վերայ՝ առատացնումեն վտակի աղբիւրը, բայց քաղաքը տեսնենք նոյն համեմատութեան մէջ զտնուելով՝ որչափ օդուտ է տալիս զիւղերին: Գոլորշիքից միշտ անձրեւ ու ձիւն է տեղում և սակաւ անգամ տեղատարափ կարկուտ. իսկ քաղաքների գոլորշիներից սակաւ անգամ ձիւն ու անձրեւ, բայց միշտ կարկուտ, վասն զի համեմատելով զիւղացու ահագին նիւթական օժանդակութիւնը, որ նա տալիս է քաղաքին, շատ սակաւ բարոյական օժանդակութիւն է ստանում: Արովհետեւ զիւղացին իւր